Եղել են դէպքեր, երբ բոլոր տղամարդկանց դուրս են քշել գիւղից և կանանց բռնաբարել: Բռնաբարութեան ենթարկւել են և ջահիլ աղջիկները՝ սկսած 8—10 տարեկանից, և նորատի հարսները, սակայն, սակաւ չեն դէպքեր, երբ բռնաբարել են պառաւ կանանց: Հաստատւում են նաև արուամոլութեան բազմաթիւ դէպքեր, բռնաբարութիւններին մասնակցել է նաև հրամանատարութիւնը, նոյնիսկ բժիշկները, օրինակ, դիվիզիայի բժիշկ Քեամիլ բէյը:

«Թալանի ենթարկւել է ամէն ինչ, որ կարելի է թալանել — դրամ, թանգարժէք իրեր, կահ-կարասի, հագուստեղէն, մթերքներ և այլն: Որովհետև Փամբակի ագգաբնակութիւնը յանկարծակիի եկաւ, նա գրեթէ ոչինչ չթագցրեց և ամէն ինչ կորցրեց: Դրամը և թանգարժէք իրերը անցել են ասկեարների ձեռքը շատ դէպքերում որպէս փրկանք կամ մահից ու բռնաբարութիւնից ազատւելու և կամ «օրէնքի» խստութիւնից խուսափելու համար»:

«Թալանի են ենթարկւած ամբողջ շրջանի անասունները. ջոկել տարել են ջահել և առոյգ անասունները՝ թողնելով վտիտներին: Տարել են գրեթէ բոլոր ձիերն ու էշերը... Ցանքսերի մեծ մասը տրորւեցին ձիերի ոտքերի տակ, մի մասը արածացրին, իսկ ինչ փրկւեց, սրա երեք-ութերորդ մասն էլ, իբրև բահրա, թիւրք իշխանութիւնը դուրս տարաւ երկրից տասնեակ վագոններով: Փամբակի լեռնաշղթայի ճոխ խոտահարքերը հնձել տուին հէնց գիւղացիներին, նրանց սայլերով կրել տուին կայարանները և բառնալով վագոնները՝ նոյնպէս դուրս տարին: Նոյն վիճակին ենթարկւեց և դեռնախնձորը... Մեղւաբուծութիւնը վերջնականապէս ոչնչացած պէտք է համարել, եթէ հաշւի չառնենք մէկ մեղւանոց, որ փրկւել է ամբողջովին, և հատ ու կենտ փեթակներ՝ մնացած այս կամ այն մեղւապահի մօտ: Շրջանում ոչնչացւած է մօտ 6500 մեղւի ընտանիք, բոլորը շրջանակաւոր փեթակներով:

«Հիմնաւորապէս ոչնչացած է բոլոր դպրոցական գոյքը, գրադարանները, կօօպերատիւները. քիչ բացառութեամբ թալանւած են և վատթար ձևերով սրբապղծւած բոլոր եկեղեցիները: Ներկայումս Փամբակում չի գործում ո՛չ մի դպրոց, ո՛չ մի կօօպերատիւ:

«Ասկեարները ամբողջ հինգ ամիս ապրել են գիւղերի հաշւին և բառի իսկական իմաստով ոչնչացրել են ոչխար, հաւ, ձու, իւղ, պանիր, կաթ և այլ մթերքներ: Եւ այսօր հայ շինականի չէն օջախը կատարեալ ամայութիւն է ներկայացնում:

«Ինչ որ ասւեց Փամբակի մասին, նոյնը կարելի է կրկնել Լոռիի մասին»:

Լոռի-Փամբակի նիւթական կորուստը, խիստ մօտաւոր թւերով, հաշււած է, մօտ 45 միլիոն բուբլի — շուրջ 15 միլիոն դոլար:

Եւ այս դեռ մի շրջանում, որը, օրինակ, Շիրակի կամ Սուրմալուի համեմատութեամբ, աւելի քիչ էր վնասւած: Կարելի է երևակայել, թէ ինչ էր կատարւում միւս շրջաններում: Իրօք որ, «այստեղից թիւրքն էր անցել»...